

5.12. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիտորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2002թ. ունեցել է հետևյալ բնութագիրը.

Օդային ավազանի որակի մոնիտորինգ: 2002թ. մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիտորինգ է իրականացվել Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի և Հրազդան քաղաքներում:

2002թ. ընթացքում կատարվել է մթնոլորտի աղտոտվածության որոշման 33830 փորձագնում:

- Երևանում տեղակայված 5 դիտակայանից գործել է 3-ը: Կատարվել է 10 աղտոտող նյութերի կոնցենտրացիաների որոշման 16331 փորձագնում: Արձանագրվել է փոշու և ազոտի երկօքսիդի սահմանային թուլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) գերազանցում նորմայից համապատասխանաբար՝ 2.7 և 2.5 անգամ: 2001թ. համեմատ փորձագնումների քանակն ավելացել է 272-ով:
- Արարատ քաղաքում մշտապես գործող մեկ դիտակայանի միջոցով 2002թ. ընթացքում վերցվել է փոշու պարունակության որոշման 909 փորձանմուշ: Փոշու առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները գերազանցվել են համապատասխանաբար՝ 4.0 և 9.6 անգամ: 2001թ. համեմատ փոշու առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները բարձրացել են 1.3 անգամ:
- Ալավերդի քաղաքում տեղակայված 2 մշտական դիտակայանների միջոցով կատարվել է 3 վնասակար աղտոտող նյութերի կոնցենտրացիաների որոշման 5403 փորձագնում: 2 դիտակայաններում էլ փոշու պարունակության որոշման փորձագնումներ չեն կատարվել՝ փոշեկուլների շարքից դուրս գալու պատճառով: Ծծմբի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 2 անգամ, միջին տարեկան ՍԹԿ-ն՝ 4 անգամ, իսկ մնացած դիտարկված նյութերի կոնցենտրացիաներն եղել են նորմաների սահմաններում:
- Վանաձոր քաղաքում տեղակայված 3 դիտակայանների միջոցով կատարվել է 4 վնասակար աղտոտող նյութերի կոնցենտրացիաների որոշման 9441 փորձագնում: Որոշվող նյութերի կոնցենտրացիաները դիտվել են թույլատրած նորմաների սահմաններում: 2001թ. համեմատ դիտվել է որոշվող նյութերի կոնցենտրացիաների նվազում:
- Գյումրի քաղաքում տեղակայված 1 դիտակայանի միջոցով 2002թ. վերցվել է փոշու կոնցենտրացիայի որոշման 849 փորձանմուշ, միջին տարեկան և առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար՝ 4 և 4.4 անգամ: 2001թ. համեմատ 1.5 անգամ բարձրացել է փոշու միջին տարեկան կոնցենտրացիան, իսկ փորձագնումների քանակն ավելացել է 120-ով:
- Հրազդան քաղաքում տեղակայված 1 դիտակայանի միջոցով վերցվել է օդի 897 փորձանմուշ, որոնց մեջ որոշվել է փոշու կոնցենտրացիաները: Փոշու առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 6 անգամ, իսկ միջին տարեկանը՝ 4 անգամ: 2001թ. համեմատ 1.2 անգամ նվազել է փոշու միջին տարեկան կոնցենտրացիան:

Երևան, Արարատ, Վանաձոր, Գյումրի և Հրազդան քաղաքների օդային ավազաններից վերցված փորձանմուշներում որոշվել է կապարի պարունակությունը (փոշու մեջ), որը դիտվել է թուլատրելի նորմաների սահմաններում:

Սակերևութային ջրերի որակի մոնիտորինգ: 2002թ. հանրապետության մակերևութային ջրերի որակի հետազոտման նպատակով փորձանմուշներ են վերցվել 30 գետերի, Արփա-Սևան թունելի, Արփի լճի ու Ապարանի ջրամբարների և Սևանա ու Երևանյան լճերի հսկման հատվածներից: 81 դիտակետերից վերցված 252 փորձանմուշներում կատարվել է ջրերի աղտոտիչների պարունակության կոնցենտրացիաների որոշման 6431 փորձազննում:

Հրազդան գետում Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում գրանցվել է թթվածնի «արտակարգ բարձր աղտոտվածություն» օգոստոսին՝ 1.3 մգ/դմ³, հոկտեմբերին՝ 1.0 մգ/դմ³, որի հետ կապված գրանցվել է ԹԿՊ₅-ի «բարձր աղտոտվածություն» համապատասխանաբար՝ 21.2 մգ/դմ³ և 35.0 մգ/դմ³:

Թթվածնային անբավարարվածություն գրանցվել է Գետառ գետի գետաբերանում՝ 4.9 մգ/դմ³:

Գրանցվել է նաև նիտրիտ, ամոնիում և պղինձ իոնների «բարձր աղտոտվածություն»՝

- նիտրիդ իոնի ՍԹԿ-ն Գետառ գետի գետաբերանում գերազանցվել է 10.4 անգամ,
- ամոնիում իոնի ՍԹԿ-ն Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում գերազանցվել է 11.8-29.3 անգամ,
- պղինձ իոնի ՍԹԿ-ն Արաքս գետում՝ Սուրմալու գյուղի մոտ, Ախուրյան գետում՝ Երվանդաշատ գյուղի մոտ, Գետառ գետի գետաբերանում, Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ, Սևանա լճում՝ 3.5 կմ թերակղզուց դեպի արևելք ընկած հատվածքներում գերազանցվել է 30-47 անգամ:

Մնացած նմուշներում ԹԿՊ₅-ի, նիտրիտ, ամոնիում, սուլֆատ, մագնեզիում, պղինձ իոնների և նավթամթերքի միջին տարեկան կոնցենտրացիաները նորմայից բարձր են եղել հետևյալ դիտակետերում՝

- ԹԿՊ₅-ինը Գետառ, Սևջուր, Հրազդան (Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ) գետերում՝ 1.5-5.3 անգամ,
- նիտրիդ իոնինը Գետառ, Հրազդան (Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ) գետերում, Երևանյան լճում՝ 5.2-7.7, Ախուրյան, Սևջուր, Ազատ գետերում՝ 1.8-4.6 անգամ,
- մագնեզիում իոնինը Սևանա լճում՝ 2-2.4 անգամ:

Փամբակ և Դեբեդ գետերում, տեխնիկական պատճառներով, պղինձ իոնի և նավթամթերքի փորձազննումներ չեն կատարվել: Վերցված մյուս բոլոր նմուշներում պղինձ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 13-17, նավթամթերքինը՝ 1.6-4 անգամ: Որոշված մյուս միացությունների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

2001թ. համեմատ մակերևութային ջրերից վերցված նմուշների քանակն ավելացել է 75-ով, փորձազննումների քանակը՝ 1960-ով:

2001թ. համեմատ, 2002թ. գրանցվել է պղինձ իոնի միջին տարեկան կոնցենտրացիայի բարձրացում, իսկ նիտրիտ և ամոնիում իոնների՝ նվազում: